ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«03» ապրիլ 2024թ.
No 1/18-4/21745-2024

«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ
ՀԱՍՑԵ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ 4-ՐԴ Փ, 2/6
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ HAYKLV@YANDEX.RU
ՀԵՌ. 097 90-01-15

Հարգելի՛ պարոն Գասպարյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ-ի դեկտեմբերի 12-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/6-1 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի» մատակարարման գնման պայմանագիր: Քանի որ, ըստ վերը նշված գնման պայմանագրի Հավելված N 2-ի՝ մատակարարման ժամանակացույցի ապրանքի մատակարարումը պետք է իրականացվեր փուլային եղանակով՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, հետևաբար, 2024 թվականի փետրվարի 20-ին կնքվել է համապատասխան համաձայնագիր, համաձայն որի, մինչև 2024 թվականի մարտի 12-ը Վաճառողի կողմից Գնորդին պետք է մատակարարվեր պայմանագրի Հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի բոլոր կետերին համապատասխանող ծառայողական շներին անհրաժեշտ չոր կեր, որը Վաճառողի կողմից չի մատակարարվել:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ 2024թ-ի մարտի 13-ին տվյալ գնման առարկայի մասով պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ շնագիտական /կենտրոն/ բաժնի պետ Կարեն Բալայանի կողմից Վաճառողի էլեկտրոնային հասցեին (HaykLV@yandex.ru) ուղարկվել է համապատասխան իրազեկման գրություն՝ տեղեկացնելով, որ մատակարարման վերջնաժամկետ է սահմանված 26.03.2024թ-ը, ինչպես նաև տեղեկացվել է, որ համաձայն

պայմանագրի 2-րդ կետի 2.1.7.1-րդ ենթակետի «բ» պարբերության՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրն, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի և սահմանված ժամկետում պարտավորությունները չիրականացնելու դեպքում Գնորդն իրավունք ունի կիրառել Պայմանագրով նախատեսված տույժն ու տուգանքը և Վաճառողին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների մասնակիցների ցանկում:

Այնուհետ, 26.03.2024թ.-ին Վաճառողի կողմից Կարեն Բալայանի էլեկտրոնային հասցեին (karen_a_balayan@taxservice.am) ուղարկվել է գրություն՝ որով կազմակերպությունը խնդրել է տրամադրել 3 օր ժամկետ՝ ապրանքի մատակարման համար:

29.03.2024թ.-ին Վաճառողի կողմից մատակարարվել է ապրանք, որի քանակական ցուցանիշը չի համապատասխանել պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցում նշված քանակին, մասնավորապես՝ պայմանագրի տեխնիկական բնութագրով նշված առաջին չափաքանակ՝ 200կգ-ի փոխարեն փաստացի մատակարարվել է 100կգ, ինչպես նաև՝ մատակարարվել է անպատշաճ որակի՝ տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, սակայն Վաճառողի կողմից գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով ներկայացված արձանագրության մեջ մատակարարված ապրանքի տեխնիկական բնութագրի փոխարեն նշվել է պայմանագրում ներկայացված բնութագիրը և չի տրամադրվել նաև պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը:

Հաշվի առնելով առկա անհամապատասխանությունները՝ հայտը նախագծած ներկայացուցչի կողմից 01.04.2024թ.-ին գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգում տրվել է բացասական եզրակացություն, հետևաբար մատակարարված ապրանքը համարվել է չընդունված և ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ շնագիտական /կենտրոն/ բաժնի պետ Կարեն Բալայանի կողմից Վաճառողի էլեկտրոնային հասցեին (HaykLV@yandex.ru) ուղարկվել է մեկ այլ իրազեկման գրություն՝ տեղեկացնելով, որ վերոնշյալ պայմանագրի 2-րդ կետի 2.1.2 ենթակետի «բ» պարբերության Վաճառողին տրամադրվում է ողջամիտ ժամկետ, այն է՝ 3 օրացուցային օր, ապրանքը փոխարինելու և պայմանագրով ներկայացված տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքը մատակարարելու համար, սակայն, 05.04.2024թ-ի դրությամբ, ապրանքի մատակարարումն այդպես էլ չի իրականացել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/6-1 ծածկագրով պայմանագրի 2-րդ կետի 2.1.7.1-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի լուծել պայմանգիրը և պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 1 755 000 ՀՀ դրամի որակավորման և 1 170 000 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նաև նախաձեռնում է «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Միևնույն ժամանակ Ձեզ եմ ներկայացնում Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը խախտելու մասով հաշվարկված տուգանքի և տույժերի հաշվարկը.

տուգանքի հաշվարկ՝ 11 700 000 X 0.5% = 58 500 ՀՀ դրամ,

տույժի հաշվարկ՝ 11 700 000 X 0.05% = 5 850 ՀՀ դրամ,

19 աշխատանքային օրվա ուշացման համար՝ 5 850 X 19 = 111 150 ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 169 650 ՀՀ դրամ՝ Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն որպես տուգանք և տույժ:

4/8/2024

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ.՝ Գ.Ղազարյան
ԳԿՎԱՎ գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 060-844-704